

Թիւ 24459
Փետրուար 18, 1975

Արժանաշնորհ

S. Արսէն Քհնյ. Պարսամեան
Հովիւ Ա. Յակոբ Եկեղեցւոյ
Նախազահ ծխական Խորհուրդի
Ռիշմընա.

Սիրելի Տէր Արսէն,

Ստացած ենք Փետրուար 5, 1975 թուակիր Զեր տեղեկագիրը, որով կը
հաղորդէք թէ Զեր Նախազահութեամբ Յունուար 26ին գումարուած համայնքին
ծխական ֆողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի հինգ անդամոց ընտ-
րութիւնը, եւ Ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը ինդրէք
ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Եկատի ունենալով որ Զեր ծխական ֆողովը տեղի ունեցած է Թեմական
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք ծխա-
կան Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ արուած ցանկին:

Հանեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի նորընտիր
Դիւանի անդամոց անունները, հասցէնները եւ հեռածայնի թիւերը, ինչպէս
նաև ծխական ֆողովին Ներկայացուած քուոր տեղեկագիրները:

Օր հնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Զեզի եւ Զեր
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքին մեր
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՁԵՎԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Պետրոս Պանտագեան
Ժէրբի Շարիկեան
Ժար Թութէլեան
Հէնրի Մակարեան
Տիկ. Շնորհիկ Սողոյեան